կարճ ժամանակամիջոցի համար, ուստի և հանգամանօրէն չենք կարող պարզել Շոթոռկանց տոհմի ծագման, կատարած դերի մասին մեր պատմութեան և ոչ ճշգիւ որոշել նրանց իշխանութեան սահմանները, դորա հետ էլ ստորագրելով Բանաւորի: Բայց ամփոփենք, ինչ որ հնարաւոր է եղել հաւաքել:



Պատկեր 12

Հաղբատի մեծ ժամատան (Յովհաննէս եպիսկոպոսի շինած, ոչ Յովհաննէս Գ. Դոփեանի, որ ժամանակակից էր Սաթուն ոթարէգին և Ամենափրկիչ խաչի կանգնողն էր, այլ նորա նախորդներից մէկը) դրան ճակատին Զաքարիա մեծի, Իւանէի եղբօր արձանագրութիւնը կայ ՈԾԹ (= 1210) թուականից, ուր ի միջի այլոց յայտնում է թէ «. . . էտու ի սբ ուխտս Հաղբատ(ա)յ իմ հայրենի գեղս որ նոր յԱշոցք(1) *զՀալալաշէն եւ զվ . . .(փչ. 4—5 տառի տեղ) եւ զի այս գեղերս հեռի էինի Հաղբատա փոխեցի էտու հայրենաւք(?!) Դաւթի որդո Շոթոկա եւ առի ը գեղին փոխան զՀաղբ.. (մի կամ երկու տառի տեղ կտրած, նորոգած են) հայրենիք և ընծա սբ նշանին Հաղբատա ամենայն սահմանաւք ոնց բնական լեալ է հողով և ջրով խոտամարգերով...» ևն:*

---

(1) «Իմ հայրենի գեղս որն որ յԱշոցք» ժողովրդական բարբառով է. Ջալալեան. Ա. 58. Երզնկեան. Հնախօսական Տեղագր. Հաղբատայ. Վաղարշապատ. 1886. եր. 27: Գրի ենք առել և մենք: